Սայաթ Նովա

Մախուխն ու օխչըրի միսը

Մախուխն ու օխչըրի միսը կըռվեցան,
Ամեն մեկը գովում ին՝ մազեն յիս իմ,
Քու մեչն ի՛նչ ղուաթ կա, ի՞նչ իս դուս տալի,
Մարթու ղուաթ ՝տըվողն ու փազեն յիս իմ:

Մախուխն ասավ. «Օխտը շափաթ պաս ունիմ,
Գըլխիս ծառա օխտը նորահարս ունիմ,
Համիմ, սըխտուր, պիտնա ու պըռատ ունիմ,
Աթամորթու սըրտի մուրազըն յիս իմ»:

Օխչըրի միսն ասավ. «Իմ մեչն է համը,
Կու դնին փըլավումը՝ կու քաշին դամը.
Ինձ մաթլաբեն կոծին, քիզ կոծին ջամը,
Ջիգրու կու պատռեցնիմ, քու ջազեն յիս իմ»:

Մախուխն ասավ. «Քանի փըքվիս պատըռվիս,
Պիտի վուր պաս պահիս, հազար փըշրըվիս,
Միխկիրդ դարց գաս ու պիտի հաղորթվիս,
Դըժուխկի ու դըրախտի ղազեն յիս իմ»:

Օխչըրի միսն ասավ. «Պակսիլ է օրը,
Դիփ քիզ ին գովում՝ քաչալն ու քոռը,
Քիզ կու քոռացնե իմ մատղի զօրը,

Լավաշում փաթաթած թավազեն յիս իմ»:

Սայաթ Նովեն ասավ. «Խոմ գի՛դիք՝ օց իմ.
Գուզիք էրկսիդ մետի, մեբաշ սրդոցիմ.
Կու վիկալնիմ յիս ձիզ մութ տիղը կոծիմ,
Կոխպեքը կու դընիմ՝ ձիր ռազեն յիս իմ»: